Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Դեռահասության տարիքի սովորողների սոցիալ – հոգեբանական խնդիրները. հաղթահարման ուղիները դասղեկի կողմից

Դպրոց՝ Հ.Գալստյանի անվան թիվ 83 ավագ

ՈՒսուցիչ՝ Անի Խաչատրյան

Երևան – 2022թ.

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Ներածություն……էջ 3

Խնդրի ներկայացումը. Ո՞վ է դեռահասը և ի՞նչ խնդիրներ նա կարող է առաջացնել……..էջ 7

Դասղեկական աշխատանքի իրականացումը……էջ 12

Եզրակացություն……էջ 21

Գրականության ցանկ……էջ 23

Ներածություն

Ես Անին եմ Խաչատրյան աշխատում եմ Հ.Գալստյանի անվան թիվ 83 ավագ դպրոցում ՝ որպես Հայոց պատմության և Հասարակագիտության ուսուցչուհի: Հուլիսի 11–27–ը մասնակցելով Edu Armenia կազմակերպության կողմից իրականացվող ուսուցիչների պարտադիր վերապատրաստման դասընթացին՝ գրել եմ հետազոտական աշխատանք «Դեռահասության տարիքի սովորողների սոցիալ – հոգեբանական խնդիրները. հաղթահարման ուղիները դասղեկի կողմից» թեմայով: Հետազոտական աշխատանքում նպատակ եմ դրել ավելի խորքային ճանաչել դեռահասին, ծանոթանալ նրա առանձնահատկությունների ու դժվարությունների շրջանակին, անդրադարձ կատարել մինչ այժմ դեռահասներին ցուցաբերած իմ մոտեցմանը: Թեման կարևոր է ինձ համար, քանի որ աշխատում եմ ավագ դպրոցում, ուստի փոխհարաբերությունների մեջ եմ գտնվում ավագ դեռահասների հետ և պետք է ունենամ համապատասխան հմտություններն ու կարողությունները ավագ դեռահասների մոտ ընդունելի և արժեքային համակարգ ձևավորող ուսուցիչ–դասղեկ լինելու համար:

Ավագ դպրոցում սովորող կամ առհասարակ յուրաքանչյուր սանի հետ կապված սոցիալ–հոգեբանական խնդրի լուծում կապված է դասղեկի գործունեության հետ: Քանի որ դասղեկի գործունեությունը բազմաբովանդակային է, ուստի դասղեկը պետք է գործի որպես ընտանեական հոգեբան, բուժքույր, կազմակերպիչ, դաստիարակ, սոցիոլոգ, բնապահպան, իրավապաշտպան….բացի թվարկվածներից՝ դասղեկը պետք է ունենա նախ մարդկային անհրաժեշտ որակները, մասնագիտական կարողություններ, հմտությունները ու սերը դեպի իր կոչումը՝ **Մանկավարժ** :

Առաջին լուրջ սոցիալ–հոգեբանական խնդիրներին սանը հանդիպում է ավագ դեռահասության տարիներին, հենց այս շրջանում է տեղի ունենում անհատի կամքի ու դժվարությունների/խնդրի/ հանդիպումը, որոնց դրսևորման հիմնական վայրը ավագ դպրոցն է, լուծում տվողը՝ դասղեկը: Ավագ դպրոցում սովորող դեռահասների

մոտ առկա խնդիրները հիմնականում նկատելի են դառնում նրանց տրամադրության ու վարքագծի դրսևորումներում։

Ավագ դպրոցի առաջին լուրջ խնդիրներից է /ինձ համար/ սաների ջերմ հարաբերություններ հաստատելը համադասարանցիների, ուսուցիչների, դասղեկի հետ։ Ամեն սան, հայտնվելով նոր միջավայրում, դժվար է հարմարվում համադասարանցիներին, դասղեկին, ուսուցիչներին, դպրոցի կարգ ու կանոնին։ Թեև կան սաներ, ովքեր արագ են ինտեգրվում նոր միջավայրին, բայց քիչ են նման աշակերտները։ Ավագ դպրոցում հանդիպող լուրջ խնդիրներից է ոչ ցանկալի վարքագծի դրսևորումը/ծխել, դասաժամերին չնստել,առանց գիրք, տետր դասի ներկայանալը, ոչ հարգալից վերաբերմունքը դեպի ուսուցիչը և առհասարակ դպրոցը/։

Ավագ դպրոցում առկա հիմնական խնդիրներից է բարձր գնահատական ստանալը, լիդերությամբ հանդես գալը։ Վերը թվարկեցի խնդիրներ, որոնք նկատելի են և դասղեկը համապատասխան քայլերով փորձում է լուծում տալ իրավիճակին, միևնույն ժամանակ ունենք սաներ, ովքեր ընդհանրապես կոնտակտի մեջ չեն մտնում համադասարանցիների, ուսուցիչների, դասղեկի հետ. բավականին դժվար է դառնում նրանց ճանաչելը և սպասելիքների շրջանակ գծելը։ Նման սաները հիմնականում այն սաներն են, ովքեր ունեն ցածր ինքնագնահատական ակնոց կրելու, թմբլիկ լինելու հիմնականում նկատելի թերությունների պատճառով։ Նման իրավիճակներում թե որպես ուսուցիչ, թե որպես դասղեկ՝ դասաժամի ընթացքում հաճախ եմ կոնտակտի մեջ մտնում այն սանի հետ, որի մոտ նկատում եմ ինքնամփոփվածություն/ այս հարցում ինձ օգնում է իմ դեռահասության շրջանը վերլուծելը/։Երբ սանը նկատում է, որ իրեն կարևորում են անկախ ակնոց կրելուց,անկախ թմբլիկ երևալուց,անկախ հագուստի «բրենդային» լինել չլինելուց, անկախ իր «սթայլից»՝ սկսում է ինքնավստահ զգալ իրեն։ Իմ աշխատանքային գործունեության ընթացքում ինքնամփոփ աշակերտին շփվող դարձնելու համար դիտավորյալ նստեցրել եմ ակտիվ սանի կողքին, նախապես ակտիվ սանին տեղյակ եմ պահել՝ ինչու եմ նստեցնում, և արդյունքում տվյալ ինքնամփոփ սանը դարձել է «ամենաշատախոսը»։ Նաև կարևորվում է առանձնազրույցները տարբեր խնդիրների պատճառով մեկուսացած, պասիվ սաների հետ. հաճախակի առանձնազրույցների տարբերակը

ևս ինձ օգնել է: Նման իրավիճակում օգնում է նաև **դիտավորյալ խաղի** կազմակերպումը դասղեկի կողմից դասղեկի ժամին /ես կիրառել եմ հասարակագիտության դասին/ «անկեղծություն» վերնագրով, որի ընթացքում յուրաքանչյուր սանի բնութագրող արտահայտություն պետք է անեն դասարանի սաների քանակի չափով/եթե շատ չեն դասարանի աշակերտները /ես ևս մասնակցում եմ խաղին/նախ շեշտում եմ , « Մեծ եք, նախ պետք է մտածեք հետո արտահայտվեք և քանի որ անկեղծություն ենք խաղալու, նեղանալ չպետք է լինի»/բայց պետք է կիրառել այն դասարանում, որտեղ սաները ջերմ են միմյանց հետ/:Որպես օրինակ՝ առաջարկում եմ ինձ բնութագրեն, այնուհետև երբ հերթը հասնում է ինքնամփոփ սանին, մյուս սաները հիմնականում լռում են, որովհետև չշփվող է. սաները չեն հասցրել ճանաչել. նախընտրում են լռել/ բնութագրողը ես եմ դառնում և ասում եմ նախապես առանձնացրած հատկանշական բառեր, որոնք թեկուզ փոքր, բայց դրական հետք են թողնում տվյալ սանի հոգում/դեմքին հայտնվում է ժպիտ, սկսում է թեքվել նայել դասարանցիներին, իսկ մինչ այդ երբեք նույնիսկ հետ չէր շրջվում՝ նայելու համադասարանցուն/:Նույն իրավիճակին փորձել եմ լուծում տալ նաև հետևյալ կերպ. երբ բավականաչափ ճանաչել եմ իմ սաներին, նրանցից հստակ առանձնացրել եմ սան,/սաներ/, որի մոտ առկա են եղել մարդկային վեհ հատկանիշներ/բարություն,նրբանկատություն,ընկերասիրություն,հավասարություն. . . /և ասել եմ՝ ուշադիր եղիր X–ի նկատմամբ /վստահ լինելով,որ ինքը հասկացավ թե ինչու՞ պետք է ուշադիր լինի և ինչպե՞ս/ և արդյունքում իմ X աշակերտը ինքնավստահություն ձեռք բերելով՝ սկսում է փոխհարաբերությունների մեջ մտնել համադասարանցիների հետ: Հայ դպրոցի լրջագույն խնդիրներից է ավագ դեռահասության շրջանում մեծ տարածում գտած ազգային ու պետականամետ մտածողության բացակայությունը, որին ավելի մանրամասն կանդրադառնամ իմ հետազոտական աշխատանքիս մյուս մասերում:

Ինձ համար բոլոր խնդիրների հաղթահարման արդյունավետությունը «սանիդ» լավ ճանաչելն է. այս դեպքում շատ հեշտ կլինի արդյունավետ մեթոդաբանություն մշակելը: Օրինակ իմ դասղեկական աշխատանքը կատարելու ընթացքում ունեցել եմ իրավիճակներ, որին լուծում տալ չէր հաջողվում. ինձ թվում էր ես անում եմ ամեն ինչ, բայց արդյունքի չեմ հասնում, այժմ երբ վերլուծություն եմ կատարում,

հասկանում եմ, որ ես լավ չեմ ճանաչել իմ սանին և սխալ մոտեցում եմ որդեգրել։/X սանը տաքարյուն, բռնկուն, լիդերության ձգտող, բոլորը սխալ են մոտեցմամբ առաջնորդվող էր, երբ ստեղծում էր կոնֆլիկտային իրավիճակ, հիմնականում ուսուցիչների հետ ես զրույցի ընթացքում միշտ փորձել եմ լինել ավելի կոպիտ, քան ինքն է, ու արդյունքում տեղի էր ունենում բախում իմ և X–ի միջև։ Այժմ հասկանում եմ, որ ես խնդրի լուծմանը կարող էի հասնել նրա հետ ավելի մեղմ,ժպտերես խոսելաոճով, թվարկվածները պետք է օգտագործեի որպես մեթոդ և չմտածեի, որ X կմտածի ինձ հաճո վարքագիծ է դրսևորել ։

Ավագ դպրոցում առկա խնդիրները և դրանց լուծմանը ուղղված մոտեցումները վերը թվարկվածով չեն սահմանափակվում։ Իմ աշխատանքային գործունեության ընթացքում բախվել եմ իրավիճակների, որտեղ ինձ թվացել է լուծման տարբերակ այլևս չկա, սակայն հետազոտական աշխատանքը գրելու ընթացքում ձեռք բերեցի հետևյալ միտքը, որ անլուծելի գոնե անշտկելի իրավիճակներ չկան. միշտ ելք կա, պետք է անընդհատ պրպտել, փորձարկել, կիրառել համապատասխան մասնագետների/մանկավարժ,հոգեբան/ առաջարկած տարբերակները, չէ որ մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունը հենց տարաբնույթ գործելաոճն է։ Նույն խնդիրը տարբեր մանկավարժներ լուծում են տարբեր մոտեցմամբ. մեր աշխատանքը պահանջում է հավասար, բայց տարաբնույթ մոտեցում։

Հույսով եմ աշխատանքի ընթացքում կշարունակեմ տեսնել իմ հաջողությունները և բացթողումները, ձեռք բերել մի շարք հմտություններ՝ հետագայում ճիշտ դասղեկական աշխատանք կազմակերպելու համար։

Մաս 1

Ո՞վ է դեռահասը և ի՞նչ խնդիրներ նա կարող է առաջացնել:

Յուրաքանչյուր դեռահաս երեխա անհատականություն է մեզանից յուրաքանչյուրի պարտքն է հարգել, ընդունել, լսել նրան: Ինչպես մենք գիտենք գոյություն ունի տարիքային շրջաբաժանում իր առանձնահատկություններով: Դեռահասությունը տարիքը բաժանվում է **երկու** շրջափուլերի՝[1]

Կրտսեր դեռահասություն	Ավագ դեռահասություն
12 – 15տ.	15 – 17տ./18/
. Տրամադրության անկայունություն	. Մյուսներից տարբերվելու պահանջմունք
. Ես – ի նկատմամբ կենտրոնացվածություն	. Իջնում է հուզական լարվածությունը
. Ցածր ինքնագնահատական	. Հուզական մեծ զրգռվողականություն

Քանի որ դասավանդում եմ ավագ դպրոցում ավելի շատ փոխհարաբերությունների մեջ եմ ավագ դեռահասների հետ, ովքեր արդեն հաղթահարել են դեռահասության առաջին փուլը և ոտք են դրել ավագ դեռահասություն: Ավագ դեռահասների մոտ չենք նկատում մի շարք առանձնահատկություններ, որոնք նկատում էինք կրտսեր դեռահասության շրջանում. օրինակ աղյուսակում թվարկվածները: Բայց չի կարելի ասել, եթե սովորողը ավագ դեռահասության շրջանում է, հետևաբար հաղթահարել է բոլոր ճգնաժամները: Ավագ դեռահասության շրջանն էլ ունի իր առանձնահատուկ խնդիրները, եթե մինչև կրտսեր դեռահասություն դասղեկին հաջողվում է շատ հարցերում առաջնորդ լինել սովորողների մոտ, ապա ավագ դեռահասների մոտ այնքան էլ հեշտ չէ նույն դերը տանելը, այս շրջանում նրանք սկսում են իրենց մեծ զգալ, արդեն իրենք զբաղվում են իրենց արտաքին տեսքով, որդեգրում են իրենց հագուստի, երաժշտության ոճը, իրենք են կարծիք հայտնում, տարբեր իրավիճակներում, իրենք են փորձում լուծումներ գտնել և այլն:

Այս շրջանում սովորողի մոտ առաջանում է մտահոգություն կյանքի իմաստի և ապագայի շուրջ միևնույն ժամանակ ավագ դեռահասը ավելի լավ է կառավարում իր հույզերը և վարքը:[2] Նախորդ շրջանից նրա մոտ պահպանվում է տրամադրության կտրուկ փոփոխությունը, մեծանում է շփման և ուշադրության կենտրոնում լինելու պահանջմունքը:

[1] Տե՛ս Լ. Թորգոմյան,Մանկավարժության ընդհանուր հիմունքները Երևան 2005թ.,71 էջ:
[2] Տե՛ս նույն տեղում 71–73 էջ:

Դեռահասության շրջանի դժվարությունները պայմանավորված են մի շարք առանձնահատկություններով՝ ֆիզիկական, կենսաբանական փոփոխություններով, սեռական հասունությամբ և այլն: Թվարկված փոփոխությունների համատեքստում ավագ դեռահասի մոտ տեղի է ունենում արժեքային համակարգի՝ աշխարհընկալման, աշխարհայացքի ձևավորում:Տարիքային այս շրջանը բարդ է նաև նրանով, որ բավականին ակտիվ վիճակում է գտնվում նրա հուզական դաշտը, որը նրան դարձնում է բռնկուն, անհանդուրժող:[3] Այս շրջանում, ինչպես արդեն նշվել է, մեծանում է հետաքրքրությունը սեփական արտաքինի նկատմամբ՝ մարմնի մասերի անհամաչափությունը, դիմագծերի անճշգրտությունը, չափից ավելի նիհար և թմբլիկ լինելը,և մի շարք այլ ֆիզիկական թերություններ առաջացնում են թերարժեքության զգացում, որն էլ իր հերթին հանգեցնում է դեռահասի մոտ հոգեբանական ճգնաժամի, որը շատ դեռահասների տանում է թմրամոլության, նույնիսկ ինքնասպանության /ամենաշատ ինքնասպանություններ կատարվում են դեռահասության շրջանում/ և մի շարք այլ կործանարար սովորույթների/:

Դեռահասության շրջանում մի շարք այլ երևույթների հետ առաջին լուրջ և անընդհատ կրկնվող կոնֆլիկտներն են ձևավորվում ընկերների, հասակակիցների և մանավանդ ծնողների ու ուսուցիչների հետ: Վերջիներիս հետ վիճելու տարբեր պատճառներ են նշում դեռահասները մեջբերում եմ նրանց խոսքերը. «հաճախ ծնողների և ուսուցիչնեչի կողմից հնչում են արտահայտություններ, որոնք դեռահասի համար դառնում են առաջին պարիսպները երեխա–ծնող, սան–ուսուցիչ հարաբերություններում»:

Այնքան լայն է դեռահասի տարիքային առանձնահատկությունների շրջանակը, որ վերը թվարկածով չենք կարող սահմանափակվել:

Ավագ դեռահասության տարիքի կարևոր բնութագրիչներ են նաև «**Ընկերությունը**», և **«Սերը»**,[4] չկա դեռահասության շրջան առանց այս երկու հասկացությունների գոյության իրենց վատ ու լավ դրսևորումներով, այս երկու փիլիսոփայական հասկացությունները ծնվում են «Դեռահասությունից» և ամբողջ կյանքի ուղեկիցը դառնում որպես թանկ հիշողություն: Ավագ դեռահասության շրջանում յուրովի է

[3] Տե՛ս https://hy.wikipedia.org/:
[4] Տե՛ս նույն տեղում:

ընկալվում կյանքի իմաստը։ Դեռահասը փորձում է դուրս գալ մեծերի ազդեցությունից և փորձում է կերտել իր աշխարհը, որտեղ կարևոր տեղ են զբաղեցնում իր հասակակից **ընկերները**։[5] Դեռահասները իրենց շրջապատում են հասակակիցներով, որովհետև նրանց մոտ առկա է ինքնահաստատման խնդիր, որը ևս դեռահասության առանձնահատկության դրսևորում է։ Այս շրջանում դեռահասների համար ավելի ազդեցիկ կերպարներ են դառնում ընկերները, քան նույնիսկ ծնողները։ Ընկերների հետ են հիմնականում քննարկում, կիսվում, պատմում իրենց զգացմունքները, անհանգստությունները,գաղափարները։ Պատճառն այն է, որ նրանք հասակակիցներ են, նույն մշակույթի կրողը հետևաբար միմյանց վարքագիծ,գաղափար,իդեալ,հագուստի ոճ հոգեհարազատ է։Ինչպես արդեն նշեցի, քանի որ նույն մշակույթի կրողներ են, հետևաբար խիստ չեն դատում միմյանց և զերծ են մնում գաղափարական հակասություններից և չեն օգտագործում «Մեր սերունդը», «Ձեր սերունդը» անջրպետ հանդիսացող հասկացությունները, հետևաբար ավագ դեռահասների շրջանում շատ իմաստալից է դառնում ընկերության բովանդակությունը։https։[6]

Ավագ դեռահասության տարիքի հաջորդ հյուրը՝ **սերն** է, որը ամենագունագեղն ու ամենատպավորիչն է յուրաքանչյուրի կյանքում։ Այս շրջանում ավագ դեռահասը ձգտում է լինել տպավորիչ, անթերի այս է պատճառը,որ դեռահասները հաճախ կոնֆլիկտի են գնում հասակակիցների,ուսուցիչ–դասղեկի հետ, որովհետև վերջիներս չգիտենալով կամ պահի տակ աննրբանկատորեն դիտողություն կամ արտահայտություն են անում, որից բռնկվում է տվյալ դեռահասը։

Ավագ դեռահասները բացառիկ նրբանկատ ու զգայուն են ծնողների փոխհարաբերությունների նկատմամբ, եթե մինչ այդ նրանք դիտում են ծնողների փոխհարաբերությունները, ապա ավագ դեռահասության շրջանում սկսում են վերլուծել իրենց տեսածը, լսածը և առհասարակ ծնողների փոխհարաբերությունները,

[5] Տե՛ս hy.wikipedia.org/։

[6] Տե՛ս նույն տեղում։

որը անմիջական ազդեցությունն է թողնում նրանց ներաշխարհի վրա թե լավ, թե վատ առումներով: Ավագ դեռահասը շատ խնդիրներ վերլուծում է հույզերին ու զգացմունքներին տեղի տալով:

Ավագ դեռահասության շրջանում տեղի է ունենում **սեռի նույնականացում**, որի արդյունքում դեռահասը գիտակցում է կոնկրետ, ո՞ր սեռի ներկայացուցիչ է ինքը և ըստ այդմ՝ կազմակերպում է իր դրսևորելիք վարքագիծը, հաճախ դեռահաս աղջիկը կամ տղան գտնում են, որ իրենք իրենց չեն զգում այն սեռի ներկայացուցիչ, որի մեջ իրենց տեսնում է հասարակությունը:

Վերը թվարկվեց այն հիմնական առանձնահատկությունները, որոնք բնորոշ են գրեթե բոլոր դեռահասներին, սակայն այս առանձնահատկությունների զարգացման ընթացքը և արդյունքները տարբեր են լինում դեռահասների անհատականության առանձնահատկություններով պայմանավորված :

Գտնվելով արձակուրդում հեռավար տարբերակով կատարել եմ հարցում 12–րդ դասարանը ավարտած իմ դասղեկական դասարանի սովորողների և ծնողների հետ հեռավար տարբերակով, որը կներկայացնեմ ստորև աղյուսակի տեսքով:

Նշե՛լ որևէ հոգեբանական խնդիր, որին առնչվել եք ավագ դպրոցում :

Խնդիր	Աշակերտ
1.Ակնոց կրելը	X
2.Արտաքնապես ոչ գեղեցիկ լինելը	X
3.Ավելորդ քաշ ունենալը	X
4.Այլ ոճի հագնվելը	X
5.Կռվասեր լինելը	X
6.Տղա լինել ու լավ սովորել	X
7.Հարուստ չլինելը	X
8.Ինչ վատ սերունդ է մեծանում	X

9.Նոր համադասարանցիներին և ուսուցիչներին հարմարվելը	X
10.Ցածր ինքնագնահատական ունենալը	X

Ինչպես արդեն ներածության մեջ նշել եմ, քանի որ աշխատում եմ ավագ դպրոցում, իմ համար որպես դասղեկի կարևոր և անհրաժեշտ էր ուսումնասիրել ավագ դեռահասների հետ կատարած իմ աշխատանքը:Ստորև ներկայացնում եմ այն խնդիրների մի մասը, որոնց հետ առնչվել եմ դասղեկական իմ աշխատանքի ընթացքում ավագ դպրոցում և որոնք խոչընդոտ են հանդիսացել իմ աշխատանքում:

. Նոր համադասարանցիների հետ հարաբերություններ հաստատելը:

. Դասավանդող նոր ուսուցիչներին հարմարվելը:

. Նոր դասղեկին ընդունելը, հարմարվելը:

. Առանց ուշանալու,պայուսակով ու դասագրքերով հաճախելը:

. Դպրոցականին համապատասխան արտաքին տեսքը:

. ՈՒսումնական գործընթացում ակտիվության,ուսումնառության ապահովումը:

. Բարձր գնահատականներ ստանալը ինչպես աշակերտի, այնպես էլ ծնողների պատկերացմամբ:

. Սեռական կողմնորոշման հարցը:

. Ծնողի կողմից սովորողի առողջական վիճակի մասին տեղյակ չպահելը

. Հասարակական գործընթացներում ակտիվության ապահովումը:

. Սեփական երկիրը սիրելը,արժևորելը, իր ազգին արժանապատվորեն վերաբերվելը առհասարակ ՀԱՅԻՆ և ՀԱՅԱՍՏԱՆ սիրե՛լը

Մաս 2

Դասղեկական աշխատանքի իրականացումը

Երբ սկսվում է ուսումնական տարին ավագ դպրոցում, որպես դասղեկ՝ ստանձնում ես դասղեկական դասարան և առաջին զգացումը, որ ունենում ես պատասխանատվության զգացումն է... հաջորդ քայլով՝ նպատակադրվում ես քո դասղեկական դասարանի յուրաքանչյուր աշակերտի համար լինել ***ընդունված դասղեկ:*** Ավագ դեռահասի հետ աշխատող ուսուցիչ–դասղեկի համար կարևոր է մասնագիտական կոմպենտենտությունը /կարողունակություն/ ինչպես նաև տիրապետելը կոմպենտենտության բաղադրիչ հանդիսացող ռեֆլեքսիային, որը հնարավորություն կտա դասղեկին ուսումնասիրելու, հասկանալու իր ներաշխարհը վերահսկել, կարգավորել կկարողանա սեփական գործողությունները: ՈՒսուցիչ–դասղեկի փորձը զուգորդվելով ռեֆլեքսիային կապահովի մասնագիտակ զարգացումը՝ **Փորձ+Ռեֆլեքսիա=Զարգացում:**[7]

ՈՒստարվա առաջին օրվանից դասղեկի համար հոգեհարազատ է դառնում յուրաքանչյուր սան. ուզում ես միայն լավը տեսնել ու լսել նրանցից յուրաքանչյուրի մասին: Յուրաքանչյուր սան այնքան հարազատ է դառնում դասղեկի համար, որ հաճախ գրեթե բոլոր դասղեկները գոնե մեկ անգամ իրենց աշխատանքային գործունեության ընթացքում կոնֆլիկտի մեջ են մտնում դժգոհություն հայտնող որևէ կոլեգայի հետ իր սանին «արդարացնելու» նպատակով:

ՈՒստարվա առաջին օրը դասարանի հետ կապված կազմակերպչական աշխատանքները ավարտելով /դասարանի արտաքին տեսք, դասագրքերի բաշխում, ավագի ընտրություն/ ուստարվա երկրորդ օրը դասղեկը պետք է իրականացնի **դիտարկում**՝[8] իր սաներին ճանաչելու համար/Ես դիտարկման մեթոդով եմ ճանաչում իմ սաներին/: Դասղեկի կողմից սաներին դիտարկելը շատ կարևոր է նրան ճանաչելու համար: Այդ ճանապարհին դասղեկը նախ սկսում է լսել և ոչ ակնառու

[7] Տե՛ս ՈՒսուցչի մասնագիտական կոմպենտենտություն…Լ.Գասպարյան,Երևան,1–4 էջ:

[8] Հոգեբանի խորհուրդ

ուշադրությամբ հետևել սաներին: Ինչու՞ ոչ ակնառու ուշադրությամբ, որովհետև, եթե սանը, ինչպես ցանկացած անհատ, նկատի, որ իր քայլերը ենթակա են գիտակցված ուշադրության կսկսի իրեն դրսևորել արհեստական պահվածքով ու ձևական բնույթ կրող մտքեր կարտահայտի արդյունքում վարագույր կիջնի բնականի և արհեստականի միջև, մինչդեռ սան–դասղեկ հաջողված հարաբերությունների հիմնաքարը փոխադարձ անկեղծությունն է:

Դիտարկումը սանին ճանաչելու ամենաարդյունավետ միջոցներից է: Դասղեկի համար սանին դիտարկելը սկսվում է նրա նստելու, խոսելու, դպրոց հաճախելու, տարբեր իրավիճակներում դրսևորվելու ձևից: ՈՒստարվա առաջին ամսվա ավարտին դասղեկը հստակ պատկերացում պետք է ունենա /իհարկե ընթացքում բացահայտումներ լինում են/ իր սաների հոգեկերտվածքի, դրական ու բացասական կողմերի մասին:

Այնուհետև դասղեկը ուշադրությունը պետք է տեղափոխի սանի ուժեղ և թույլ կողմերի /կարողունակությունների/ դաշտ, ինչպես գիտենք, մարդկային հասարակության կյանքում ամեն ինչ բաշխված է անհավասարաչափ և ըստ այդմ՝ սաների կարողությունները ևս անհավասարաչափ են, ուստի դասղեկը յուրաքանչյուր սանի մոտ պետք է գտնի որևէ կարողություն, որը իր ձեռքին բանալի կդառնա սանի հետագա զարգացումը խթանելու, կրթական գործը կազմակերպելու հարցում: Դիտարկման ընթացքում ավարտվում է սանին ճանաչելու գործընթացը այնուհետև սկսվում է գործնական քայլերի միջոցով դասարանում առկա խնդիրները շտկելու, լուծելու գործընթացը:

Սաներին ճանաչելու ևս մի մեթոդ է Կ.Լեոնհարդի հարցարանը, որը նոր ուսումնական տարում կկիրառեմ: https:[9]

Այժմ անդրադառնամ **սաների փոխհարաբերությունների** խնդրին ավագ դպրոցում: Յուրաքանչյուր ավագ դեռահաս սիրով հաճախում է դպրոց, եթե դասարանում տիրում է ջերմ մթնոլորտ: Հաճախ սանը այդ ջերմության բացակայության պարագայում փոխում է դպրոցը, դասարանում պասիվ է իսկ դասաժամերին

[9] Տե՛ս / https://psytests.org/leonhard/sm88.html/:

ձանձրույթի մեջ է, այստեղ որպես դասավանդող ուսուցչուհի՝ իմ վերլուծության արդյունքում նշեմ, որ ավագ դպրոցի այն դասարաններում կա ուսման բարձր առաջադիմություն, որտեղ կա ***դասընկեր*** հասկացության ներկայությունը: Դասարանում ջերմ մթնոլորտը պետք է ձևավորի դասղեկը աշակերտների հետ համատեղ: Ըստ իս ոչ մի աշակերտ չպետք է նստի միայնակ: ՈՒշադրության կենտրոնում պետք է պահի այն աշակերտներին, ովքեր առավել դժվար են հարմարվում նոր հարաբերություններին: Հենց ծանոթության առաջին օրվանից պետք է խոսել համադասարանցիների հետ հարաբերությունների մասին, ընդ որում՝ այն պետք է նրանց ներկայացվի որպես ամենակարևորը, պետք է նշվի, որ իրենցից յուրաքանչյուրը պետք է հարգի,ընդունի,ուրախանա,տխրի իր համադասարանցու համար,պետք է նշվի, որ ոչ մեկը մյուսին վերևից չպետք է նայի,ըստ սոցիալական վիճակի չպետք է հարաբերություններ հաստատեն կամ չհաստատեն պետք է սանին բացադրել օրինակներով, որ կյանքում ամեն ինչ ենթակա է փոփոխության, մնայուն են միայն լավ հուշերը, որոնք իրենք պետք է տանեն հենց դպրոցից: Այնուհետև պետք է օրինակ բերել այն հայտնի մարդկանց, ովքեր դպրոցական տարիների ընկերներ են և այստեղ պետք է նշել, որ այնքան կարևոր է դպրոցը, դպրոցական հարաբերությունները, որ անգամ ստեղծվել են բազմաթիվ ֆիլմեր դպրոցական թեմաներով,այստեղ առաջարկել որևէ ֆիլմ դիտել թեկուզ տանը և համատեղ քննարկել դասղեկի ժամին: Մեկ ֆիլմի դիտման արդյունքում կքնարկվի մի շարք դասարանական իրավիճակներ սկսած համադասարանցիներին բուլինգի ենթարկելուց տարբեր առիթներով մինչև համադասարանցու նկատմամբ համակրանք կամ սեր առաջանալը: Երբ համատեղ քննարկեն ֆիլմից վեր հանված դրական և բացասական դրվագները, արդյունքում ոչ մեկը չի ցանկանա նմանվել ֆիլմի բացասական կերպարին, չի գործի նրա նման, կկարևորի լավ դասարանցի լինելու հանգամանքը: Համադասարանցիների հետ մտերմանալու, նրանց ճանաչելու միջոց է ***դասարանական էքսկուրսիան*** քաղաքից դուրս/ եթե դպրոցի կանոնադրությունը թույլ է տալիս /համատեղ թանգարան, թատրոն գնալը, որոնք կազմակերպում է դասղեկը սովորողների և նրանց ծնողների համաձայնությամբ:Այս ամենը կնպաստեն նաև դասղեկ–սան հարաբերությունների ջերմացմանը: Այս հարցը նաև պետք է քննարկվի ծնողական ժողովներին, ծնողներին պետք է հորդորել, որ

վերջիներս ևս հետևողական լինեն իրենց երեխաների ու համադասարանցիների հարաբերություններին: Իհարկե միայն վերը թվարկածներով հնարավոր չի լինի ապահովել դասարանի ցանկալի մտերիմ ու ջերմ մթնոլորտը վերջինիս հասնելու համար անհրաժեշտ է դասղեկի շարունակական, հետևողական, նվիրված ու բազմաեղանակ աշխատանքը:

Ավագ դպրոցում դասղեկը նույն եռանդով պետք է ապահովի նաև իր **սաների ու դասավանդող ուսուցիչների** ջերմ հարաբերությունները: Նախորդ մասերում նշված առանձնահատկություններով պայմանավորված ավագ դպրոցի սաները հաճախ են կոնֆլիկտներ ունենում դասավանդող ուսուցիչների հետ գնահատականի, անհարգալից խոսելաձևի պատճառներով: Այս խնդիրը առավել հեշտ լուծելի է, երբ տվյալ ուսուցիչը փորձառու է և կոնֆլիկտի ժամանակ պահպանել է մանկավարժի կերպարը: Այս պարագայում դասղեկը առանձին զրուցում է երկու կողմի հետ լսում է նրանց մատնանշած կոնֆլիկտի պատճառը, այնուհետև համապատասխան քայլեր է ձեռնարկում նրանց հարաբերությունների շտկման համար: Լինում են իրավիճակներ մեկ անգամվա զրույցը բավական է իրավիճակի շտկման համար, լինում են դեպքեր բազմակի անգամվա զրույցները անարդյունք են լինում և նույն աշակերտը կենֆլիկտներ է ունենում համադասարանցիների, տարբեր ուսուցիչների հետ. այս դեպքում կապ եմ հաստատում ծնողների հետ՝ հասկանալու համար ինչով է պայմանավորված նման պահվածքը, և ըստ իրավիճակի շարունակում եմ այլ մեթոդներով հասնել իրավիճակի շտկմանը:

Դասղեկական աշխատանքի արդյունավետության ապահովողը ***դասղեկական կոմպենտենտությունն***[10] ***է:*** Դասղեկի աշխատանքին պետք չէ նայել որպես պատասխանատվության, որը դու ստանձնում ես աշխատանքի բերումով: Դասղեկը յուրաքանչյուր սանի համար օրվա 24 ժամ հասանելի պետք է լինի ինչպես իր ընտանիքի անդամին, դասղեկի համար չպետք է լինի ոչ աշխատանքային օր: Դասղեկը պետք է բաց լինի սաների համար, դասղեկը դասարան չպետք է մտնի միայն դասաժամը, կամ աշխատանքային պարտականությունները իրականացնելու

[10] Տե՛ս ՈՒսուցչի մասնագիտական կոմպենտենտություն, Լ.Գասպարյան,Երևան էջ 1:

համար։ Ես՝ որպես դասղեկ, դասամիջոցներին, ազատ դասաժամերիս, նախքան դասերի սկսվելը և դասաժամերի ավարտին գտնվել եմ դասարանում, որպեսզի իմ սաները հնարավորություն ունենան ինձ ճանաչելու նախ որպես մարդ, որովհետև դասաժամի ընթացքում սաները ինձ տեսել,լսել են որպես ուսուցչուհի, իսկ դասաժամից դուրս, երբ նրանց հետ եմ, տարաբնույթ թեմաներով ենք խոսում միմյանց հետ, որը և՛ ինձ ,և ՛ իրենց օգնում է ճանաչել և ըստ այդմ հարմարվել միմյանց։ Ավագ դեռահասը քանի որ գտնվում է այն տարիքային շրջափուլում, որտեղ կարևոր են նոր փոխհարաբերությունները, ուստի պետք է նրանց հետ հաճախ զրուցել որպես ավագ ընկեր։ Դասղեկ–սան հարաբերությունների սերտաճմանը նպաստում են նաև էքսկուրսիաները և տարաբնույթ միջոցառումները։

Հիմնական դպրոցը ավարտելուց, վերջին զանգի միջոցառումից հետո սեպտեմբեր ամսին սանը ավագ դպրոց է գալիս «Ես արդեն մեծ եմ» հոգեբանությամբ։ Եվ ըստ իր պատկերացման՝ դպրոց պետք է հաճախի առանց պայուսակի ու գրքերի, դպրոցականին ոչ համապատասխան արտաքինով /աղջիկները շպարված, ընդգծող հագուկապով, տղաները առանց սափրվելու, որովհետև «Ինքը մեծ է»։ Այս պարագայում ես զրուցում եմ իմ սաների հետ, ընդունում եմ, որ իրենք մեծ են, այո, և ավագ դպրոց գալիս են իրենց կամքով և ծնողի համաձայնությամբ և դպրոցի հետ կնքել են պայմանագիր, որով պարտավորվել են ենթարկվել դպրոցի կանոնադրությանը, որի մեջ մտնում է նաև ժամանակին դասի հաճախելը, աշակերտի կերպարին համապատասխան արտաքին տեսքով, պայուսակով, դասագրքերով։ Արտաքին տեսքի հետ կապված աղջիկների հետ առանձին եմ զրուցում տղաների հետ առանձին։ Արտաքին տեսքի հետ կապված՝ ևս կարևոր է դասղեկի կերպարը, եթե դասղեկի հագուկապը համահունչ է առհասարակ ուսուցչի կերպարին, ապա սաների հագուկապը, առհասարակ արտաքին տեսքը հիմնականում հնարավոր է կառավարել։

Ավագ դպրոց հաճախող ավագ դեռահասների մի մասը ընդհանրապես հետաքրքրված չէ ոչ մի առարկայով, մի մասը հետաքրքրված է իր նախընտրած մասնագիտական առարկաներով, սաների շատ փոքր մասն է ապահովում ակտիվ

ուսումնական գործունեություն: Նման իրավիճակում աննդհատ զրուցում եմ սաների հետ,նշում եմ, որ 21–րդ դարը բազմակողմանի զարգացած մարդկանց դարաշրջան է, որ իրենք ունեն ամեն հնարավորություն լինելու այդ բազմակողմանի զարգացած անհատներից մեկը, ունեն հնարավորություն իրենց հաջողակ ապագան կերտելու համար, որ օգտվեն ժամանակի ընձեռած հնարավորություններից, բերում եմ տարբեր հայտնի մարդկանց օրինակներ, որ չեն ունեցել այն հնարավորությունները, որոնք այսօր իրենք ունեն, բայց հասել են բարձունքների, միաժամանակ բերում եմ մարդկանց օրինակներ, ովքեր իրենց անտարբերությամբ իրենց ոչինչ են դարձրել. . .Ցավոք, այս հարցում հաջողություններս շատ չեն, հաշվի առնելով, որ մարդիկ տարբեր են նաև ցանկությունների և նպատակների առումով շարունակում եմ ոգևորիչ խոսք ասել և համապատասխան աշխատանք կատարել:

Ավագ դպրոցում, ինչպես հիմնական դպրոցում, առկա է բարձր գնահատական պահանջող ոչ թե ստացող սաներ և ծնողներ: Նման իրավիճակներում կողմնորոշվելու համար ինձ օգնել է հաճախակի դասալսումների գնալը իմ դասղեկական դասարան տարբեր դասաժամերի և ծանոթացել եմ իմ սաների առաջադիմությանը բոլոր առարկաներից,կատարել եմ համապատասխան նշումներ ըստ օրերի : Առանձին զրուցել եմ իմ դասարանում դասավանդող բոլոր ուսուցիչների հետ: Իմ տեսածի ու լսածի հիման վրա պատկերացում եմ կազմել իմ յուրաքանչյուր սանի առաջադիմության աստիճանի մասին,արդյունքում ոչ մի սան չի բողոքել ցածր գնահատական ստանալու համար, իսկ եթե ծնող է դիմել նշված խնդրով փաստարկների հիման վրա /գրավոր աշխատանքներ, ներգրավվածությունը դասաժամին, դասավանդող ուսուցչի և ծնողի միջև առողջ զրույցի ապահովումը/ նա ևս ծանոթացել է իր երեխայի կարողությունների իրական պատկերին և խնդիրը հնարավորինս լուծվել է:

Ժամանակակից ավագ դպրոցում վերջին ժամանակներում բավականին տարածված բնույթ է կրում սովորողների **սեռային կողմնորոշվածության** հետ կապված խնդիրը, որի լուծման միակ ուղին առայժմ թաքցնելն է: Ես՝ որպես դասղեկ, բախվելով նմանատիպ խնդրի, չեմ ունեցել ռազմավարություն և միակ բանը, որ կարողացել եմ անել դասարանի սովորողների հետ բազմակի անգամ խոսելն է եղել, որպեսզի հոգեբանական ճնշման չենթարկել տվյալ սովորողին: Նմանատիպ

իրավիճակներում կարծում եմ պետք է աշխատի դպրոցի հոգեբանը, որովհետև այս պարագայում տվյալ հարցի լուծման, շտկման մասնագետը ինքն է:

Հայ իրականության մեջ բավականին տարածված է **թաքցնել դեռահաս աղջկա կամ տղայի առողջական խնդիրները՝** մտավախություն ունենալով հասարակության վերաբերմունքից: Անգամ երբ խնդիրը ակնհայտ երևում է, նախ ծնողը ապա նաև սովորողը ծնողի հրահանգով կտրուկ հրաժարվում է, որ խնդիր կա, և եթե չլինի դասղեկի ուշադրության գործոնը, ապա առկա առողջական խնդիրը կարող է ավելի բարդանա: Օրինակ ունեցել եմ սան, ով ուներ ակնհայտ քայլվածքի խնդիր, բայց բժշկական թղթերում նշած էր, որ սանը բաձարձակ առողջ է, խնդրի մասին երբևէ չի նշել նաև ծնողը, և այդ սանը ցանկություն էր հայտնել ֆիզկուլտուրայի դասաժամին վազելու, եթե ես ևս գտնվեի անուշադիր և տվյալ սանը մասնակցեր այդ վազքին, հետևաբար ոտքի խնդիրը ավելի կբարդանար: Ես երեք ուսումնական տարիների ընթացքում չխոսեցի սանի ծնողների հետ այդ թեմայով սակայն, եթե հետագայում բախվեմ նման իրավիճակի ինչքան էլ ծնողը թաքցնի, ես կապ կհաստատեմ, կասեմ այն, ինչ տեսնում եմ և կբացադրեմ՝ թաքցնելը ինչի կարող է հանգեցնել և անպայման կնշեմ առողջական խնդիրները դրանք այն խնդիրները չեն, որոնց պարագայում մենք պետք է հաշվի առնենք հասարակության կարծիքը, առավել ևս ամաչենք:

Ավագ դպրոցի **սաների մի մասը** բավականին ակտիվ է հասարակական գործընթացներում, մի մասը ոչ, ինչքան էլ գիտենք, որ նույն ոգևորվածությունը,նույն ակտիվությունը չենք կարող ակնկալել բոլոր սաներից, միևնույնն է ցավալի է աճող սերնդի այս աստիճան **պասիվությունը,** օրինակ թանգարաններ, էքսկուրսիաներ գնալիս անգամ Եռաբլուր և Ծիծեռնակաբերդ այցելելիս և նույնիսկ հրաժարվում են ներկայանալ վերջին դասին :Այս խնդրի լուծման ճանապարհին ձեռքբերումներս մեծ չեն եղել, որովհետև խնդիրը լուծելու ճանապարհին հանդիպել եմ նույն սանի ծնողի ժխտողական կեցվածքին, հանգիստ պատասխանում է. «Իմ երեխայի որոշումն է չմասնակցել»:

Վերջին տարիներին տեղի ունեցած գործընթացներով /համաճարակ, պատերազմ, որը շարունակվում է մինչև այսօր/ պայմանավորված ավագ դպրոցի սաներից հաճախակի եմ լսում «Աշխարհում հայից վատ, թույլ, չար, դավաճան ազգ չկա»,

«Բանակ չեմ գնալու. ինչիս ա պետք, ու՞մ համար գնամ», «Զզվում եմ էս երկրից, անհամբեր սպասում եմ, երբ եմ եթալու ստուց»: Շատ ցավոտ է նման արտահայտություններ լսելը մի սերնդից, որին դու քո ապագան ես ինչ-որ տեղ վստահում, ես նախ ասում եմ.« Հասկանում եմ Ձեզ»բայց ես այսպես եմ մտածում՝ երկիրը նման է ընտանիքի, ցանկացած ընտանիքում լինում են դրական ու բացասական իրավիճակներ, ի՞նչ անենք հրաժարվե՞նք, ծնողներիս ասենք դուք վատն ե՛ք, դավաճանեք,զզվելիեք,թողնենք հեռանա՞նք ,իսկ երբ որոշ ժամանակ անց հեռվից տեսնենք մեր ընտանիքում համեմատաբար լավ է ամեն ինչ վերադառնա՞նք, այստեղ ծավալվում է քննարկում, որի արդյունքում սանը կամ սաները երբեմն սկսում են արդարացնել, թե ինչու այդպես արտահայտվեցին, արդյունքում հնարավոր է շատ փոքր փոփոխություն սանի մտածելակերպում: Նշված մեջբերումը մի օրինակ էր խնդրի լուծմանը ուղղված բնականաբար ոչ խնդրի հաղթահարման միակ ուղին է ոչ էլ խնդրի լուծումը: Ազգային մտածելակերպով երեխա դաստիարակելը ոչ միայն դպրոցի ու ուսուցչի խնդիրն է, այստեղ ըստ իս մեծ դերակատարում ունի երեխայի ծնողը: Եթե ծնողը նորմալ է համարում իր երեխայի պասիվությունը ու չի դրդում ակտիվ հասարակական գործունեություն ծավալելու, դժվար երեխային սիրել տա իր երկրին, ժողովրդին կարևորի բանակում ծառայելու հանգամանքը: Երբ ծնողը ամեն ջանք գործադրում է, որպեսզի երեխայի համար ձեռք բերի բժշկական թուղթ, որի մեջ նշված լինի որևէ լուրջ հիվանդություն, որի առկայության պարագայում երեխան «կազատվի» զինվորական ծառայությունից, դժվար ես կամ ուրիշ ուսուցիչ–դաստղեկ կարողանանք այս երեխայի մեջ արմատավորենք, որ բանակում ծառայելը սրբազան պարտք է ոչ թե պարտավորություն, որից պետք է հրաժարվել: Այս ուղղությամբ բոլորս՝ /ծնող,դաստիարակ, ուսուցիչ, համապատասխան կառույցների ներկայացուցիչներ,առհասարակ հայ մարդ/անելիք ունենք այսօր մենք կանգնած ենք լուրջ մարտահրավերների առաջ, որոնք հաղթահարելու համար մեզ պետք է առողջ հոգեբանությամբ դեռահաս, որը դառնա վաղվա կենդանի լեգենդը, մտավորականը, քաղաքական գործիչը, բարեխիղճ բժիշկն ու մանկավարժը:

Վերոնշյալ խնդիրները և դրանց լուծմանն ուղված քայլերը բնականաբար ամբողջը չեն, վեր հանեցի հիմնական խնդիրները և դրանց լուծմանը ուղղված իմ

մոտեցումներից օրինակներ, որդեգրեցի նոր մոտեցումներ, որոնք կկիրառեմ նոր ուստարում:

Եզրակացություն

Իմ հետազոտական աշխատանքի թեման «Դեռահասության շրջանի սովորողների սոցիալ–հոգեբանական խնդիրները. հաղթահարման ուղիները դասղեկի կողմից» շատ հոգեհարազատ էր և աշխատեցի մեծ սիրով ու ոգևորվածությամբ: Ըստ իս աշխատանքի շրջանակներում հասա իմ նպատակին, այն է՝ ո՞վ է դեռահասը, ի՞նչ առանձնահատկություններ, խնդիրներ ունի այս տարիքը, ինչպե՞ս ճանաչել, աշխատել նրա հետ:

Որպես եզրակացություն նշեմ, որ խնդիր հասկացությունը պետք չէ դիտարկել զուտ բացասական երևույթ, խնդիրների գոյությունն է ապահովում լավի, նորի,նպատակահարմարի փնտրտուքը և կիրառումը:

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրեցի առհասարակ դեռահասի կերպարը, հետադարձ հայացքով ուսումնասիրեցի իմ ցուցաբերած մոտեցումները ավագ դեռահասներին, որպես հետազոտության միջոց զրուցեցի նրանցից շատերի հետ և հանգեցի հետևյալ եզրակացության, որ դեռահասներին ավելի շատ պետք է տանք, քան պահանջենք և համբերատար լինենք՝ հաշվի առնելով, որ տարիքային շրջափուլ է, կանցնի: Շատ կարևորեցի դեռահասին ուսումնասիրող մասնագետների աշխատությունները, իմ կարծիքով պետք է հաճախակի կազմակերպվեն համապատասխան մասնագետների և մանկավարժների հանդիպումներ, որովհետև ժամանակի հետ փոխվում է աճող սերնդի մտածելակերպը, խնդիրների շրջանակը հետևաբար պետք է փոխվի նրանց նկատմամբ ցուցաբերվող մոտեցումների մեթոդաբանությունը: Հոգեբաների աշխատությունները, վերապատրաստող մասնագետների խորհուրդները, կոլեգաներիս ներկայացրած իրավիճակային պատմությունները ինձ օգնեցին գալ այն եզրակացությանը, որ ավագ դեռահասների մոտ առկա գրեթե բոլոր սոցիալ–հոգեբանական խնդիրների հիմքում կա հստակ պատճառ և այսուհետ չեմ « շտապի նկատողություն» տալ իմ սանին նախ կիմանամ պատճառը, հետո:

Իմ հետազոտական աշխատանքը գրելու ընթացքում կրկին եկա այն եզրակացությանը, որ ավագ դեռահասի հետ աշխատելիս անհրաժեշտ է պահպանել անկեղծությունը և սրտացավություն, եթե սանը զգա, որ իր դասղեկը սիրում է իրեն որպես սան/ շատ հոգեբանական խնդիրներ դեռահասի մոտ առկա են ծնողի,

հարազատի սիրո և ուշադրության պակասի պատճառով: Անկեղծ է, ի սրտե ուզում է շտկել իրավիճակը,հավատում է, որ ինքը կարող է լինել լավը ինքը ևս թեկուզ փոքր, բայց կփորձի փոխվել, իսկ լավ սաները կձգտեն լինել ավելի լավը:

Մեկ անգամ ևս համոզվեցի, որ եթե ուզում ես լինել հաջողակ դասղեկ, ապա պետք է նախ սիրես քո մանկավարժի աշխատանքը, որ սիրել կարողանաս սաներիդ ինչպիսին էլ նրանք լինեն, այնուհետև քո աշխատասիրությամբ աննըդհատ կատարելագործես մանկավարժական կոմպենտենտներնը, և ամենակարևորը՝ ժամանակի հետ պետք է քայլես, և՛ որպես ուսուցիչ, և՛ որպես դասղեկ:

Ծանոթանալով տարբեր մասնագետների աշխատություններին, վերապատրաստող մասնագետների առաջարկած մեթոդներին, փորձին՝ եկա այն եզրահանգմանը, որ ավագ դեռահասի մոտ առաջացած ցանակացած սոցիալ– հոգեբանական խնդրի համար փնտրելու դեպքում կգտնվի գոնե մի մեթոդ, որը թեկուզ ինչ–որ չափով կփոխի իրավիճակը:

Գրականության ցանկ

1.Մանկավարժության ընդհանուր հիմունքները,Լ.Թորգոմյան:

2.https://hy.wikipedia.org/:

3.https://psytests.org/leonhard/sm88.html :

4.ՈՒսուցչի մասնագիտական կոմպենտենտություն,Լ.Գասպարյան,Երևան